ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 2-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ է ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը: Հանուն Վեհափառ Հայրապետի Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը օդանավակայանում դիմավորում է տ. Սերովբե արքեպիսկոպոսին, որը Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, Վեհարանում ընդունվում է Վեհափառ Հայրապետի կողմից:

*
* *

Մարտի 3-ին, չորեքշաբթի.—Մայր տաճարում, առավոտյան ժամերգությունից հետո, կատարվում է «Արևագալ»-ի հանդիսավոր ժամերգություն, որին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան ժամը 20.30-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Վեհարանում՝ Իր մոտ հրավիրել Մայր Աթոռի միաբանությանն ու սարկավագներին, որոնք հանդիպում են ունենում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Սերովբե արքեպիսկոպոսի հետ, որը ներկաներին խոսում է ֆրանսահայ ազգային-եկեղեցական կյանքի և մասնավորաբար վերջերս Փարիզի «Լուվր»-ի թանգարանում բացված «Հայ մշակույթը Ուրարտուից մինչև մեր օրերը» ցուցահանդեսի ստեղծած մեծ հետաքրքրության մասին:

«Լուվր»-ում բացված հայ մշակույթին նվիրված ցուցահանդեսում մեծ կարևորությամբ ներկայացված են նաև եկեղեցական արվեստի շուրջ 15 ցուցանմուշներ՝ մասունքներ, ձեռագրեր, հայ ոսկերչական արվեստի ընտիր նմուշներ, որոնք ուղարկված են եղել Մայր Աթոռից և Երուսաղեմի հայոց պատրիարքարանից, Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ:

Ցուցահանդեսում մասնավոր ուշադրության և հետաքրքրության առարկա են դարձել հայ մշակույթի ցուցադրված այլ արժեքավոր ցուցահանդեսների կարգին նաև հայ եկեղեցական արվեստի այս նմուշները:

Հանդիպման վերջում Վեհափառ Հայրապետը Իր գոհունակությունն ու շնորհակալությունն է հայտնում տ. Սերովբե արքեպիսկոպոսին՝ այս շահեկան հանդիպման և զրույցի համար:

*
* *

Մարտի 5-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 17-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որին ներկա է լինում նաև տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, որը ժողովում զեկուցում է ֆրանսահայ թեմի ազգային-եկեղեցական կյանքի և ինչպես նաև Արևմտյան Գերմանիայի հայաշատ քաղաքներում հայ կրոնական համայնքների կազմակերպման անհրաժեշտության մասին:

*
* *

Մարտի 7-ին, կիրակի.—Գ կիրակի քառասնորդական պահոց (Անառակին).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մկրտիչ ավագ քհն. Մկրտչյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Օշին վրդ. Նիկոլյանը՝ «Հայր մեղայ յերկինս և առաջի քո» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 9-ին, երեքշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Վիեննայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը: Մայր տաճարում, Իջման ս. սեղանի առջև, իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, տ. Մեսրոպ ծ. վարդապետը ներկայանում է Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Նրա օրհնությունը:

*
* *

Մարտի 12-ին, ուրբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետից հրաժեշտ է առնում տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և վերադառնում իր թեմը:

Երևանի օդանավակայանում տ. Սերովբե արքեպիսկոպոսին ճանապարհում է, հանուն Վեհափառ Հայրապետի, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը:

*
* *

Մարտի 14-ին, կիրակի.—Դ կիրակի քառասնորդական պահոց (Տնտեսին).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մկրտիչ ավագ քհն. Մկրտչյանը: Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը քարոզում է Տնտեսի առակի հոգևոր և բարոյական նշանակության մասին՝ հավատացյալի կյանքի և գործունեության մեջ:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հուզիչ դամբանական է խոսում մարտի 7-ին Սոֆիայում մահացած բուլղար օրթոդոքս եկեղեցու պետ Նորին Սրբություն Տ. Կիրիլ Պատրիարքի կյանքի և մեծ գործունեության մասին, հանգուցյալին ներկայացնելով որպես բարի ու քաջ մեկ հովիվը Քրիստոսի եկեղեցու, քաջահմուտ եկեղեցական պատմաբան և հայ եկեղեցու ու հայ ժողովրդի մեծ ու անկեղծ բարեկամ:

Դամբանականից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգիստ Տ. Կիրիլ Սրբազան Պատրիարքի հոգվո խաղաղության և հիշատակի:

*
* *

Մարտի 21-ին, կիրակի.—Ե կիրակի քառասնորդական պահոց (Դատաւորին).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Մխիթարյան միաբան տ. Հարություն վրդ. Պզտիկյանը՝ «Անիրաւ դատաւոր» առակի մասին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 22-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռի միաբան տ. Տարոն վրդ. Ճերեճյանը, որը ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում շուրջ երկու ամիս, Վեհափառ Հայրապետի օրհնությունը ստանալով մեկնում է իր նոր պաշտոնատեղին՝ Մարսել:

*
* *

Մարտի 23-ին, երեքշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 12-ին, Վեհարանում Հայոց Հայրապետին է այցելում՝ ՍՍՀՄ-ում ԱՄՆ-ի արտակարգ ու լիազոր դեսպան պրն. Զեկոբ Բիմը, որը այցելությամբ գրտնվում էր Հայաստանում, իր հարգելի տիկնոջ և դեսպանատան երկրորդ քարտուղար Մարտին Ուենիքի հետ:

Հայոց Հայրապետի և մեծահարգ պրն. դեսպանի միջև տեղի է ունենում զրույց՝ ջերմ մթնոլորտում:

*
* *

Մարտի 27-ին, շաբաթ.—Տօն է սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի վիրապն.

Այսօր փակ է հոգևոր ճեմարանը մեծ տոնի առիթով:

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քհն. Մարուքյանը:

*
* *

Մարտի 28-ին, Կիրակի.—Զ կիրակի քառասնորդական պահոց (Գալստեան).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մկրտիչ ավագ քհն. Մկրտչյանը և քարոզում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը՝ «Որ զխորհուրդ քո գալըստեանդ յառաջագոյն գուշակեցեր» բնաբանով: